Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդում
„21„ 10 2021թ.
(արձանագրություն № 2)

Վավերացնում եմ
ռեկտոր Ա. Ուռուտյան
„22„ 10 2021 թ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽՃԱՆԱՉՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Բովանդակություն

ՀԻՄՔԵՐ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 2
ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ 4
ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 6

ՀԻՄՔԵՐ

Սույն ընթացակարգի համար փաստաթղթային հենք են ծառայել.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում N1240 Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի N938-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (25.08.2011) https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=70813
2. Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարի հրաման N1676 Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N1242-ն հրամանի մեջ փոփոխություն կատարելու մասին (17.12.2017) https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=127435
3. ECTS Ուղեցույց 2015 https://erasmusplus.am/home/wp-content/uploads/2018/11/Uxecuyc-2017-verjnakan.pdf

4. ՀԱԱՀ Միջազգային ծրագրերի մասնակիցների մրցույթների կազմակերպման և անցկացման ընթացակարգ (20.10.2017)
https://old.anau.am/images/stories/contentpic/artaqinkaper/Yntacakarg-mijazgayin_cragreri_mrcuytneri_anckacman.pdf
5. Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական համակարգի՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման գործընթացի ընդլայնման ծրագիր
https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/03/MAR10-14_1.pdf
6. ECTS Users' guide
https://ec.europa.eu/education/ects/users-guide/docs/ects-users-guide_en.pdf
7. Erasmus+ International Credit Mobility: Handbook
https://ec.europa.eu/programmes/erasmus-plus/sites/erasmusplus/files/international-credit-mobility-handbook_en.pdf
8. Erasmus Charter for Higher Education 2014-2020
https://eacea.ec.europa.eu/erasmus-plus/funding/erasmus-charter-for-higher-education-2014-2020_en
9. The European recognition Manual for Higher education Institutions
http://eurorecognition.eu/Manual/EAR%20HEI.pdf
10. Erasmus+ Student Charter
https://ec.europa.eu/programmes/erasmus-plus/resources/documents/applicants/student-charter_en
11. Your Rights as a mobility student
https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/25f4644f-5c2c-44ba-ac8b-b7b4a2c701b0
12. EHEA Strategy "Mobility for Better Learning"
https://www.cmepius.si/wp-content/uploads/2014/02/2012-EHEA-Mobility-Strategy.pdf
13. Erasmus+ Programme Guide 2020
https://ec.europa.eu/programmes/erasmus-plus/resources/documents/erasmus-programme-guide-2020_en

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) Միջազգային կրեդիտային շարժունության արդյունքների փոխճանաչման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) նպատակն է սահմանել օտարերկրյա ուսումնական հաստատություններում բակալավրի ուսանողների, մագիստանտների, ասպիրանտների և հետազոտողների (այսուհետ՝ ուսանող) ձեռքբերած կրեդիտների կուտակման, փոխանցման և ճանաչման գործընթացները ՀԱԱՀ-ում:

1.2 Միջազգային ակադեմիական շարժունությունը (այսուհետ՝ ՄԱՇ) ակադեմիական շարժունության տարատեսակ է, որը ենթադրում է օտարերկրյա բուհերում (ընդունող բուհ), որևէ կրթական մակարդակում ուղարկող բուհի ուսանողների կարճաժամկետ առկա ուսուցում և/կամ պրակտիկայի անցկացում: ՄԱՇ-ի ժամկետները, ֆինանսավորումը և այլ

կարգավորումները կախված են այն ծրագրից, որի շրջանակներում իրականացվում է շարժունությունը:

1.3 ՄԱՇ-ը կարող է կազմակերպվել՝

- ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող Էրազմուս+ հիմնական գործողություն-1 ծրագրերի շրջանակներում,
- ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կնքված միջպետական համաձայնագրերի շրջանակներում,
- ՀԱԱՀ և օտարերկրյա բուհերի միջև կնքված երկկողմ համաձայնագրերի շրջանակներում,
- Միջազգային այլ դրամաշնորհներով նախատեսված շարժունության բաղադրիչների շրջանակներում,
- Անհատական նախաձեռնությամբ և օտարերկրյա ուսումնական հաստատությունների հրավերով (ազատ տեղաշարժվող ուսանող):

1.4 ՀԱԱՀ-ում ՄԱՇ-ի կրեդիտների փոխճանաչման համար հիմնական պատասխանատուներն են դեկանատները և/կամ կրթական ծրագրերի պատասխանատուները *(ակադեմիական պատասխանատուներ)*, Միջազգային կապերի դեպարտամենտը *(ինստիտուցիոնալ պատասխանատու)*, ինչպես նաև Ուսումնական գործընթացի կառավարման վարչությունը:

1.5 Սույն ընթացակարգը նպատակ ունի նպաստել ՀԱԱՀ սովորողների և հետազոտողների մասնակցությանը ՄԱՇ-ի ծրագրերին և կրեդիտների կուտակմանը, փոխանցմանն ու ճանաչմանը՝ դրանով իսկ խթանելով բուհի միջազգայնացումը:

1.6 Ուսումնական գործընթացի կառավարման վարչությունը և Որակի գնահատման և ապահովման կենտրոնը իրավասու են հետևելու և գնահատելու կրեդիտների կուտակման և ճանաչման ողջ գործընթացը:

1.7 Որակի գնահատման և ապահովման կենտրոնը և Միջազգային կապերի դեպարտամենտը (այսուհետ՝ ՄԿԴ) ապահովում են կրեդիտների ճանաչման և փոխանցման մշտադիտարկման հստակ մեխանիզմները:

1.8 Միջազգային կապերի դեպարտամենտը աջակցում է ՄԱՇ-ի կազմակերպմանը, անհրաժեշտության դեպքում՝ ընդունող համալսարանի հետ կապի ապահովմանը և լրացուցիչ տեղեկատվության տրամադրմանը:

1.9 Կրեդիտների ճանաչման գործընթացը և համապատասխան տեղեկատվությունը շահագրգիռ կողմերի համար պետք է լինի թափանցիկ և հասանելի:

1.10 Սույն ընթացակարգը հաստատվում, փոփոխությունների և/կամ լրացումների է ենթարկվում ՀԱԱՀ գիտական խորհրդի որոշմամբ Միջազգային կապերի դեպարտամենտի կամ այլ շահագրգիռ կողմերի առաջարկությամբ: Այն պետք է վերանայվի ՀԱԱՀ-ի արտաքին և ներքին միջավայրերի փոփոխություններին զուգընթաց, ըստ անհրաժեշտության:

2. ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 ՀԱԱՀ-ում կրեդիտների կուտակման և ճանաչման գործընթացը հիմնված է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS), շարժունության մասնակցի

ուսումնական պլանի, կրթական ծրագրի ու կրթական բաղադրիչների վերջնարդյունքների վրա:

2.2 Շարժունության ընթացքում կուտակված կրեդիտները չպետք է գերազանցեն համապատասխան որակավորում ստանալու համար անհրաժեշտ ընդհանուր ուսումնական ծանրաբեռնվածության բակալավրի կրթական ծրագրի 25 տոկոսը, մագիստրոսի կրթական ծրագրի 50 տոկոսը և հետազոտողի կրթական ծրագրի 30 տոկոսը (հիմք՝ ՀՀ կառավարության N1240 որոշում, 2-րդ բաժին կետ 8):

2.3 Կրեդիտների ճանաչման համար հիմք է հանդիսանում ընդունող համալսարանում դրական արդյունքով ավարտված դասընթացների և/կամ դրանց վերջնարդյունքների համապատասխանությունը ՀԱԱՀ-ի դասընթացների վերջնարդյունքներին:

2.4 Մինչև շարժունության գործընթացի սկիզբը՝ դեկանի և/կամ կրթական ծրագրի պատասխանատուի հետ համաձայնեցնելով, Մասնակիցը կնքում է Ուսումնառության պայմանագիր կամ համանման այլ փաստաթուղթ (այսուհետ՝ ՈՒՊ), ինչը նախատեսված է շարժունության տվյալ ծրագրով:

2.5 Ընդունող համալսարանի կողմից առաջարկված և ուսանողի կողմից ընտրված դասընթացների կրեդիտների առնվազն 1/3-ը պետք է համապատասխանի ՀԱԱՀ-ի տվյալ կիսամյակի կրեդիտներին:

2.6 Եթե ՄԱԾ-ի ժամանակ դրական գնահատակով ավարտված դասընթացի կրեդիտների քանակը և վերջնարդյունքները համընկնում են ՀԱԱՀ-ում համապատասխան դասընթացի վերջնարդյունքներին նվազագույնը 80 %-ով, ապա ուսանողը ազատվում է տվյալ դասընթացի հանձնումից կամ վերահանձնումից ՀԱԱՀ-ում:

2.7 Եթե դասընթացի կրեդիտների քանակը ավելի քիչ է ՀԱԱՀ-ում համապատասխանող դասընթացի կրեդիտից, իսկ դասընթացի վերջնարդյունքների համապատասխանությունը 80 %-ից քիչ է, ապա ուսանողը լրացնում է պակասող կրեդիտների քանակը համաձայն դեկանատի և ամբիոնի հանձնարարականի համաձայն (օրինակ՝ ինքնուրույն աշխատանքի ներկայացում, անհատական հետազոտություն և այլն), ինչի համար ստանում է պակասող կրեդիտները և գնահատականը: Այս դեպքում ուսանողի վերջնական գնահատականը ձևավորվում է վերոնշյալ գնահատականների միջին թվաբանականի արժեքով: Իսկ եթե ընդունող համալսարանի և ՀԱԱՀ-ի դասընթացների վերջնարդյունքների համապատասխանությունը 80 %-ից բարձր է, ապա ճանաչվում է ՀԱԱՀ-ում նախատեսված կրեդիտների քանակը:

2.8 Եթե ընդունող համալսարանում ուսանողը ունեցել է դասընթաց, որն ավարտվել է առանց գնահատականի, իսկ ՀԱԱՀ-ի համապատասխան դասընթացն ավարտվում է քննությամբ, ապա ՀԱԱՀ-ի կողմից ճանաչվում են տվյալ դասընթացի կրեդիտները, իսկ որպես գնահատական նշանակվում է կամ ՀԱԱՀ-ում սահմանված քննական նվազագույն անցողիկ գնահատականը (ուսանողի համաձայնությամբ) կամ կազմակերպվում է քննություն տվյալ դասընթացից:

2.9 Ֆորսմաժորային իրավիճակներում կամ երբ ընդունող համալսարանի կողմից ՈՒՊ-ով նախատեսված դասընթացներից մեկը կամ մի քանիսը չեն կազմակերպվել կամ խոչընդոտներ են ստեղծվել (դասընթացը հասանելի է եղել միայն մայրենի լեզվով, չեն

տրամադրվել անգլերեն լեզվով նյութեր և այլն), ուսանողը հնարավորություն է ստանում **հանձնել** տվյալ դասընթացը/ները ՀԱԱՀ-ում:

2.10 Եթե ուսանողը չի ներկայացնում դրական գնահատականներ և համապատասխան կրեդիտներ այն դասընթացներից, որոնք համապատասխանում են ՀԱԱՀ-ի տվյալ կիսամյակի դասընթացներին, ապա համարվում է, որ նա ձախողել է տվյալ դասընթացի քննությունը և վերադարձից հետո ուսանողը մասնակցում է ՀԱԱՀ-ի տվյալ դասընթացների **առաջին վերահանձնմանը:**

2.11 Եթե ուսանողը ձախողել է ՀԱԱՀ-ի այլ կիսամյակներից ընտրված դասընթացները, ապա պարտավորվում է հաճախել դրանց համապատասխան կիսամյակում:

2.12 ՄԱԾ-ի արդյունքները ամրագրվում են ուսանողի անհատական ակադեմիական տեղեկագրում և դիպլոմի հավելվածում:

2.13 ՄԱԾ-ի ընթացքում ձեռք բերված կրեդիտները, որոնք ամրագրված են համապատասխան պաշտոնական փաստաթղթում և համապատասխանում են ՀԱԱՀ-ի համապատասխան դասընթացներին, ճանաչվում են ՀԱԱՀ-ի կողմից և արտահայտվում են ուսանողի միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հաշվարկում:

2.14 ՄԱԾ-ի ընթացքում ձեռքբերված այն այն դասընթացներն ու կրեդիտները, որոնք նախատեսված չեն ՀԱԱՀ-ի ուսումնական պլանով, նշվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրի և դիպլոմի հավելվածի *ուսումնական արտապլանային առարկաների* (Extracurricular) բաժնում և չեն ազդում ուսանողի ՄՈԳ-ի ձևավորման վրա:

2.15 Եթե տվյալ դասընթացի հաշվով կուտակած կրեդիտների քանակը գերազանցում է ՀԱԱՀ-ում համապատասխան դասընթացի կրեդիտներին, ապա ճանաչվում է ՀԱԱՀ ուսումնական պլանով նախատեսված կրեդիտներին համապատասխան կրեդիտների քանակը, իսկ հավելյալ կրեդիտների քանակը կարող է նշվել որպես ուսումնական արտապլանային:

2.16 Եթե տվյալ դասընթացի վերջնարդյունքները, բացի հիմնական դասընթացից, մասնակի կամ ամբողջությամբ ծածկում են ՀԱԱՀ-ի ուսումնական պլանով նախատեսված մեկ այլ դասընթացի վերջնարդյունքներ ևս, ապա ճանաչվում են և՛ հիմնական, և՛ լրացուցիչ դասընթացների կրեդիտները:

2.17 Եթե ՄԱԾ-ի դասընթացի վերջնարդյունքները համապատասխանում են ՀԱԱՀ-ի մեկից ավելի դասընթացների վերջնարդյունքներին, ապա այդ դասընթացի գնահատականը նույնությամբ փոխանցվում է դրանց:

2.18 Եթե ՀԱԱՀ-ի և ընդունող բուհի գնահատման համակարգերը նույնն են, ապա ուսանողի գնահատականը փոխանցվում է նույնությամբ:

2.19 Եթե ՀԱԱՀ-ի և ընդունող բուհի գնահատման համակարգերը տարբեր են, ապա ՄԿԴ-ի օժանդակությամբ դեկանատի կողմից պետք է կատարվի գնահատականների փոխարկում երկու բուհերի գնահատման համակարգերի համադրմամբ: Այս դեպքում որպես վերջնական գնահատական ճանաչվում է ձևավորված առավելագույն գնահատականը:

2.20 Եթե նախատեսվող ՄԱԾ-ը չի ներառում համարժեք պրակտիկա և համընկնում է ՀԱԱՀ-ի տվյալ կիսամյակում նախատեսված պրակտիկայի ժամկետներին, ապա ուսանողը չի կարող մասնակցել ՄԱԾ-ին: Նման դեպքերում ուսանողի մասնակցությունը շարժունությանը հնարավոր կլինի միայն բացառիկ դեպքերում, երբ համապատասխան դեկանատը և

ամբիոնը հավաստեն, որ ուսանողի վերադարձից հետո կարող են իրականացնել լրացուցիչ պրակտիկա:

2.21 Բակալավրի մակարդակում ձեռքբերված կրեդիտները մագիստրոսական մակարդակում ընդունվում են միայն բացառիկ դեպքերում՝ դեկանատի և/կամ կրթական ծրագրի պատասխանատուների, Ուսումնական գործընթացի կառավարման վարչության քննարկումների արդյունքնում:

3. ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. 1 Ժամանումից հետո 30 օրվա ընթացքում ուսանողը պետք է դեկանատ ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում-հայտ,
- ՈւՊ (հետշարժունության բաժինը լրացված, կնքված) և/կամ գնահատականների ներդիր, կամ այլ պաշտոնական փաստաթուղթ՝ տրված ընդունող համալսարանից, որը վկայում է շարժունության մասնակցի կողմից դասերի մասնակցության, կրեդիտների ձեռքբերման և գնահատականների մասին:
- Անհրաժեշտության դեպքում դասընթացների նկարագիր, վերջնարարդյունքներ և այլ փաստաթղթեր:

3. 2 Եթե վերոհիշյալ ժամկետում ուսանողը ընդունող համալսարանից ստացած չի լինում ՈւՊ-ն և/կամ գնահատականների ներդիրը, հետագա գործընթացները որոշվում են դեկանատի, ուսանողի և Միջազգային կապերի դեպարտամենտի քննարկումների արդյունքում:

3. 3 Փաստաթղթերը ներկայացնելուց հետո անհրաժեշտության դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատը ուսանողից կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր:

3. 4 Դիմում-հայտը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատը և/կամ կրթական ծրագրի պատասխանատուն ուսումնասիրում են ուսանողի փաստաթղթային փաթեթը և որոշում կայացնելու համար կազմակերպում քննարկում Ուսումնական գործընթացի կառավարման վարչության, Միջազգային կապերի դեպարտամենտի և/կամ ուսանողի մասնակցությամբ: Քննարկման արդյունքների հիման վրա դեկանատի կողմից կազմվում է համապատասխան արձանագրություն և որոշում՝ կրեդիտների ճանաչման վերաբերյալ և հրաման:

3. 5 Ծանուցում ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ուսանողը իրավունք ունի բողոքարկել կայացված որոշումը՝ ներկայացնելով դիմում-բողոք, որին դեկանատը պարտավոր է պատասխանել 3 աշխատանքային օրվա ընթացքում: